

**ԲԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Մենք նախկինում առիթ ենք ունեցել նշելու¹, որ ժամանակակից հայերենի բայը բաղադրադրիչ կառուցվածք է, որի բաղադրիչները արտահայտում են երեք տեսակի իմաստներ՝ 1) բուն բայական կամ ընթացային, 2) առարկայական և 3) իրադրա-ստորոգական, ընդ որում ընթացային և ոչ ընթացային իմաստները կարող են լինել նշանային և ոչ նշանային բնույթի: Բայական իմաստների այսպիսի բաղադրագոյությունը պատահական չէ: Նախ՝ բայն ինքնին առնված ցույց է տալիս որոշակի ընթացայնություն և այս առումով բնութագրվում է կերպով, կրկնավորությամբ և այլն: Երկրորդ՝ բայը հանդես է գալիս որպես առարկաների զանազան հարաբերությունների արտահայտիչ և այդ առումով բնութագրվում է գոյականներին և դերանուններին հատուկ այնպիսի կարգերով, ինչպիսիք են թիվը, դեմքը և այլն: Երրորդ՝ բայը հանդես է գալիս որպես նախադասության բնույթը որոշող, նախադասության հիմքում ընկած հարաբերությունը իրադրացնող միավոր, այսինքն՝ որպես ստորոգական բնույթի իմաստների հիմնական կրող և այս առումով բնութագրվում է եղանակով, իրադրական ժամանակով և այլն:

Բայական իմաստները բնութագրելիս մենք դիմեցինք ավանդական քերականության առանձնացրած կարգերին: Եթե դրանք համապատասխանության մեջ ղենք համընդհանուր լեզվաբանական կաղապարի կարգերի հետ, ապա կարելի է ասել, որ բայի մեջ արտահայտություն են գտնում հիմնական (ոչ ընթացային) և ընթացային, նշանային և ոչ նշանային, իրադրական և ոչ իրադրական մեծ թվով կարգեր: Հարկավոր է նկատի առնել, որ կարգային այսպիսի շատ իմաստներ արտահայտություն են գտնում նաև բայից դուրս՝ առանձին բառերի (հմմտ. հատկապես մակբայները), հնչերանգի և այլ միջոցներով: Բայական կառուցվածքի բաղադրիչների ստորև տրվող վերլուծությունը հիմնված է համընդհանուր լեզվաբանական կաղապարի կարգերի և եզրերի վրա:

Նախքան բայի կառուցվածքային բաղադրիչների իմաստային վերլուծությանն անցնելը պարզենք դրանց ձևային արտահայտությունն ու բաշխումը: Թե՛ բառակազմական և թե՛ ձևաբանական առումով ժամանակակից հայերենի բայը միատիպ չէ. նրա մեջ հանդես են գալիս ձևավորման և՛ համադրական, և՛ վերլուծական եղանակներ: Այս դեպքում էլ հարկավոր է նկատի ունենալ, որ եթե այլ խոսքի մասերի դեպքում բառակազմական և ձևաբանական բաղադրիչների տարբերակումը բավական հեշտ է, ապա բայի դեպքում այն դժվարություն է հարուցում. այսպես, եթե գոյական անվան մեջ բառակազմական ձևային-բաղադրիչները միշտ նախորդում են բուն ձևաբանական ձևային-բաղադրիչներին (վերջավորություններին), ապա բայի դեպքում բաշխման այդ հետևողականությունը չկա:

Հետագա քննության մեջ մենք ուշադրությունը կկենտրոնացնենք առաջնային դիմավոր բայերի կաղապարների և նրանց ներքին փոխկաղապարման վրա՝ առաջիմ բացառելով արտաքին փոխկաղապարման քննությունը. այլ կերպ ասած՝ ոչ բայական միավորներից բայական (հատկապես անվանածանց)

¹ Դ. Բ. Ժապչյան, *Общее и армянское языкознание*, Ереван, 1978, с. 115—116.

և բայերից ոչ բայական միավորների (հատկապես դերբայների և բայանունների) կազմության (փոխկաղապարման) դեպքերը չեն քննվի:

Ի տարբերություն անվանական ձևերի՝ ժամանակակից հայերենի բայա-
ձևերը մեկ ընդհանուր կաղապարով չեն կազմվում: Ըստ բաղադրիչների հա-
ջորդականության, այստեղ կաղապարային տարբերություններ կան ոչ միայն
համադրական և վերլուծական (բաղադրյալ), հաստատական և ժխտական, սե-
ռային նիշ ունեցող և չունեցող քերականական ձևերի, այլև ժողովրդագիտակ-
ցական և գրքային ոճերին պատկանող ձևերի միջև:

Եթե բոլոր կաղապարներից հիմնականը համարենք ոչ նշանակիր (տրվ-
յալ դեպքում՝ համադրական, հաստատական և անսեռանիշ) ձևերինը, բոլոր
մասնակաղապարները ներկայացնենք մեկ ընդհանուր կաղապարով և առայժմ
բացառենք զուտ բառակազմական համարվող բաղադրիչները, ապա ըստ մեր
Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները՝ աշխատության², կարող
ենք տարբերել (1) (a) A(b)(c) ընդհանուր կաղապարը, որտեղ a-ն ցույց է
տալիս կ, չ նախամասնիկները, A-ն բայարմատ-բայահիմքը, b-ն՝ հատուկ
հիմքակազմիչ մասնիկները՝ -ն-, -չ-, -են, -ան-, -աց, -եց- և այլն, c-ն՝ վեր-
ջավորությունները. հմմտ. կ-աես-ն-եմ, չ-բեր-եց-ի լիանմուշները:

Սեռանիշ մասնիկների և հատկապես վ-ի դեպքում, եթե այն պայմանակա-
նորեն նշանակենք d-ով, կունենանք երեք լրացուցիչ կաղապար: Սրանցից ա-
ռաջինում d-ն տեղ կգրավի հիմքակազմ տարրի և վերջավորության միջև՝

(2) (a) A(b)(d)(c). հմմտ. կ-աես-ն-վ-եմ:

Երկրորդ կաղապարում d-ն տեղ կգրավի A-ից անմիջապես հետո՝ հիմքա-
կազմ բաղադրիչից և վերջավորությունից առաջ՝

(3) (a) A(d)(b)(c). հմմտ. չ-բեր-վ-եց-ի:

Վերջապես, երրորդ կաղապարը հանդես կգա որպես տարասեռ կաղա-
պար, որի մեջ միանում են երկու կաղապարները, և հիմքակազմ բաղադրիչը
կրկնվում է՝

(4) (a) A(b)(d)(b)(c). հմմտ. չ-իմ-աց-վ-եց-ի:

Վերլուծական ձևերը հանդես են գալիս մի քանի կաղապարով:

Նախորդ կաղապարներին ամենից ավելի մոտ են կ և չ տարբերիչ հարաբե-
րակից մի՝ մասնիկով կազմվող կաղապարները, որոնք նորմավորված խոսքի
դեպքում ներկայացնում են (1) և (2) կաղապարների տարբերակները.

(5) (a) A(b)(c). հմմտ. մի՝ աես-ն-եմ, մի՝ բերեմ:

(6) (a) A(b)(d)(c). հմմտ. մի՝ աես-ն-վ-եմ, մի՝ իմ-աց-վ-եմ, մի՝ բեր-
վ-եմ:

Վերլուծական մյուս ձևերի դեպքում կաղապարային նոր տարբերություն-
ներ են ստեղծում ժխտական ձևերը ոչ ժխտականների և կրկնավերլուծական
(երկրորդական բաղադրյալ) ձևերը՝ մենավերլուծականների համեմատությամբ:

Ոչ ժխտական մենավերլուծական ձևերի կաղապարները համադրականնե-
րի համեմատությամբ կունենան լրացուցիչ՝ հիմքակազմ բաղադրիչներին հա-
րաբերակից և դերբայակազմ կոչված տարրերը, որոնք նշանակում ենք b₁-ով,
իսկ բուն վերջավորություններին կփոխարինեն օժանդակ բայի ձևերը, որոնք
նշանակում ենք c₁-ով.

(7) A(b)(b₁)||c₁. հմմտ. աես-ն-ում եմ, բեր-ում եմ:

(8) A(b)(d)(b₁)||c₁. հմմտ. աես-ն-վ-ում եմ, իմ-աց-վ-ում եմ, բեր-
վ-ում եմ:

Ժխտական մենավերլուծական ձևերի դեպքում a տարրը միանում է c₁-ի
հետ՝ ըստ տրամաբանական շեշտի տեղափոխվելով առաջ.

(9) (ac₁)||A(b)(b₁). հմմտ. չեմ աես-ն-ում, չեմ բեր-ում:

(10) (ac₁)||A(b)(d)b₁. հմմտ. չեմ աես-ն-վ-ում, չեմ իմ-աց-վ-ում, չեմ
գր-վ-ում:

² Գ. Զառուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Նրբան, 1974, էջ 234.

Կրկնավերլուծական ոչ ժխտական և ժխտական ձևերի դեպքում առկա են տարասեռ կաղապարներ, որոնք կազմված են նախորդ վերլուծական կաղապարների՝ ա-ից և Ը-ից զերծ մասերից և լին-եղ- տարահիմք բայի համադրական և վերլուծական կաղապարներից՝ աես-ն-ելիս չ-ել-ա, տես-ն-ելիս մի՛ լինիր, տես-ն-ելիս չ-եմ լինում, տես-ն-վ-ել-իս չ-լինեմ, տես-ն-վ-ելիս մի՛ լինիր, տես-ն-վ-ելիս չ-եմ լինում և այլն։

Կրկնավերլուծական ձևերի լին-եղ- բաղադրիչը, որ ստացել է քերականական արժեք, նշանակենք e-ով։ Բայի կառուցվածքային բաղադրիչների կաղապարները ամբողջացնելու համար մինչև այժմ նկարագրված բաղադրիչներին ավելացնենք բառակազմական համարվածները, որոնք գրքային ձևերի դեպքում երկու կարգի են և տեղ են գրավում ա տարրի ու արմատի միջև (հիմա. կ-վեր-արտա-դր-եմ), իսկ ժողովրդականացած ձևերի դեպքում միևնույն կարգի են ու տեղ են գրավում արմատից անմիջապես հետո. առաջին երկուսը նշանակենք ֆ, ց և երրորդը՝ հ տառերով. նշենք, որ ֆ, ց-ն հ-ի հետ միասին սովորաբար չեն հանդիպում։

Անցնելով նկարագրված բոլոր կաղապարների առանձին բաղադրիչների իրացման քննությունը՝ մենք բացահայտում ենք հետևյալ պատկերը³.

a=չ, կ-, վերլուծական ձևերի մեջ՝ մի՛ և վերապահությամբ, պիտի.

b=աես-, *ես-, *ն-ե-, *չ-, — աց-/-եց-, *ծ-, *ր-, —.

b₁=ալիս/-ելիս, ալու/-ելու, ած, ել, ում, ա/-ի.

c=ամ/-եմ, աւ/-ես, ա/-ի, աեմ/-եեմ, աբ/-եբ, աե/-եե. ալի/-եի, ալիր/-եիր, աբ/-եբ, ալիեմ/-եիեմ, ալիեբ/-եիեբ, ալիեմ/-եիեմ. —/ի՛ր, —ե՛ր).

ա/-ի, աբ/-իբ, ալ/-, —աեմ/-իեմ, —աբ/-իբ, —աե/-իբ, —աե/-իե.

c₁=եմ, ես, է, եեմ, եբ, եե, էի, էիր, էր, էիեմ, էիբ, էիե.

d=վ-, ացն-/-եցն-/-ցն-.

e=լին-եղ-.

f=նախ(ա)- (կանխա-), վեր(ա)-.

g=*աեղ(ա)-, *աւ(ա)-, առաջ(ա)-, արտ(ա)-, *բաղ(ա)-, *բաց(ա)-, դեր(ա)-, պիմ(ա)-, *եմք(ա)-, զուգ(ա)-, *ընդ-, *թափ(ա)-, թեր(ա)-, հալ(ա)-, համ(ա)-, *հար(ա)-, *հեղ(ա)-, հետ(ա)-, *մակ(ա)-, միջ(ա)-, ներ-, շրջ(ա)-, ստոր(ա)-, տար(ա)-, փոխ(ա)-.

h=առ/-ոռ/-տ, —ոռ-, —շտոր-, —առակ-:

Եթե հաշվի չառնենք տարասեռ և ժխտավերլուծական կաղապարներում հանդես եկող կրկնություններն ու տեղափոխությունները, ապա դժվար չի լինի նկատել, որ եզրային դիրքեր զբաղեցնող a և c, Ը բաղադրիչներն են իրադրական-ստորոգական իմաստների հիմնական կրողները, այսինքն՝ նրանք են կապ ստեղծում բայական բովանդակության և արտաքին իրադրության միջև։ Իրանք ժխտման, եղանակի, իրադրաժամանակի, դեմքի և թվի իմաստներն են։ Սրանցից առաջիններն արտահայտվում են հիմնականում a բաղադրիչի իրացումներով, որոնց միանում են c և Ը բաղադրիչների իրացումների որոշ տարբերություններ։

Համընդհանուր լեզվաբանական կաղապարի (ՀԼԿ) մեջ ժխտման իմաստը կհամապատասխանի հակասության ժխտման (—) եզրին, եղանակի և դեմքի կարգերը՝ նշանա-իրադրական պատճառականության, ուղղության և կախման կարգերի տարբեր եզրերին. իրադրական ժամանակի և թվի կարգերը ՀԼԿ-ի մեջ կունենան միևնույն անվանումները։

Ժամանակակից հայերենի բառակազմական կաղապարները կառուցված են այնպես, որ շատ դեպքերում կարգաբերային իմաստներ են արտահայտում նաև նրանց բացակայության դեպքերը, այսինքն՝ ՀԼԿ-ի հայեցակետից դիտված՝ միանշանակ համապատասխանություն չկա հակասության և հակադրության եզրերի արտահայտության եղանակների միջև։

³ Անարդյունավետ ձևերն օժտվում են աստղանիշով, դիրքային տարբերակները՝ թեք զծով։ Բաղադրիչ ձևերը տրվում են այբուբենական կարգով, բացի վերջավորություններից (c) և օժանդակ բայի ձևերից (c₁), որոնք բերվում են ըստ հարացուցային հաջորդականության։

Բայական կառուցվածքի ա բաղադրիչի չ- և մի՛ իրացումները, ինչպես նշվեց, արտահայտում են հակասության ժխտական (—) եզրի իմաստ՝ ե—, ընդ որում որոշակի արժեք ունեն նաև նրանց բացակայության դեպքերը. մի՛-ի բացակայությունն արտահայտում է, այսպես կոչված, հրամայականի իմաստ, երբեմն նաև (այդ թվում՝ համարանական ձևերի դեպքում) հանդես բերում վերջինիս հատուկ ձևեր՝ մի՛ գնա—գնա՛, մի՛ գնա՛ (գնացե՛ք)—գնացե՛ք, մի՛ գրի՛ր (գրի)—գրի՛ր, մի՛ գրե՛ք (գրեցե՛ք)—գրեցե՛ք (գրե՛ք) և այլն։ Չ-ի բացակայությունը եղանակային հատուկ արժեք չի ստեղծում (հմմտ. չգրեմ—գրեմ, չգրեցի—գրեցի, չեմ գրում—գրում եմ)։ Մի՛-ի առկայությամբ և բացակայությամբ ստեղծվող հրամայականի իմաստը հասկանալի կլինի հատկապես ըղձականի հետ այն համեմատելու դեպքում, ուստի անցնենք ա-ի մյուս իրացումներին։

Կ-ի առկայությունը արտահայտում է ենթադրականության իմաստ, այսինքն՝ նշանային պատճառի նշանային հետևանք, որ հանդես է գալիս անբավարար (այդ թվում՝ միջնորդված) իմացության հիմքի վրա («Եզա՛, թե՞ ոչ», «Եթե՛ շորերը բերեն, կգա»)։ Քանի որ կ-ն, ի տարբերություն չ-ի, հանդիպում է ոչ բոլոր ձևերի հետ, ուստի նրա՝ բացակայությունը նույնպես որոշակի իմաստ է արտահայտում՝ ըղձականության հատուկ երանգ՝ կգնամ—գնամ (կգնամ)։ Եթե ենթադրականությունը նշանային պատճառի նշանային հետևանք է, ապա ըղձականությունը նշանային պատճառ է իրական հետևանքի համար։ Հրամայականից այն տարբերվում է նրանով, որ վերջինս իրադրական առումով ենթադրում է նաև խոսքի մասնակից։

Վերջապես, մի քանի խոսք պիտի-ի մասին։ Իր բաշխմամբ այն հավասարարժեք չէ կ-ին և չ-ին. եթե կ-ի հետ կամ—կամ հարաբերության մեջ է, ապա չ-ի հետ կարող է լինել և՛—և՛ հարաբերության մեջ, այսինքն՝ հանդիպել նրա հետ միասին։ Հետևաբար այն կարող է դրվել ա-ի իրացումների մեջ վերապահորեն՝ նրա իմաստը հարկադրականությունն է, որ ցույց է տալիս իրական պատճառի և հետևանքի նշանային օղակ (ինչ որ իրական պատճառ առաջ է բերում սուբյեկտիվ շարժում իրական հետևանքի համար)։

Ձևականացնելով իմաստային վերլուծության արդյունքները և մի՛-ի բացակայությունը պայմանականորեն նույնացնելով բուն հրամայականի հետ՝ կունենանք ա-ի իրացումների հետևյալ բանաձևերը՝ համապատասխան համառոտումներով (ի—իրադրական, ն—նշանային, պ—պատճառականություն, ու—ուղղություն)։

նպ←իու→(նշանային հետևանք՝ ըստ խոսողի առնված՝ «խոսողը ենթադրում է, որ...»)՝ կ-.

նպ→իու←(նշանային պատճառ՝ ըստ խոսողի առնված՝ «խոսողը ցանկանում է, որ...»)՝ կ-.

նպ→իու←(նշանային օղակ իրական պատճառի և հետևանքի համար՝ ըստ խոսողի առնված՝ «խոսողը անհրաժեշտ է համարում (հարկադրում է), որ...»)՝ պիտի.

հ—նպ→իու←իու←(խոսողի կողմից խոսակցին ուղղված նշանային պատճառի ժխտում՝ «խոսողը չի ցանկանում, որ խոսակիցը...»)՝ մի՛.

նպ→իու←իու←(խոսողի կողմից խոսակցին ուղղված նշանային պատճառ՝ «խոսողը ցանկանում է, որ խոսակիցը...»)՝ մի՛.

հ—չ-

Վերջապես, հարկավոր է տարբերել եղանակի մի դրսևորում ևս, որի դեպքում բայաձևերը չեն զուգորդվում ոչ կ-ի, ոչ պիտի-ի և ոչ էլ մի՛-ի հետ. սա ավանդական քերականության սահմանական եղանակ կոչվածն է, որ ցույց է տալիս խոսողի նշանա-պատճառային չեզոքությունը՝ լոկ փաստի առկայության և բացակայության արձանագրումը՝ առանց ցանկության, ենթադրականության և հարկադրականության։

(հ—)նպ. իու←՝ (չ-)/—(խոսողի նշանային պատճառականություն չեզոքություն՝ «խոսողը արձանագրում է, որ...»)։

Ե-ի և Ե₁-ի՝ արդեն բերված իրացումներն արտահայտում են, ինչպես նըշվել է, իրադրա-նշանային զանազան իմաստներ՝ մասամբ ոչ ընթացային (դեմք և թիվ), մասամբ՝ ընթացային բնույթի (իրադրաժամանակ):

1) Դիմային իմաստները բառիս բուն առումով իրադրանշանային ուղղության և կախման կարգերի դրսևորումներ են, այսինքն՝ նշանային իմաստների կրողներն այս դեպքում համընկնում են խոսքային իրադրությամբ կապված առարկաների հետ. 1-ին դեմքը խոսողն է, 2-րդը՝ խոսակիցը (ում ուղղված է խոսքը), 3-րդը՝ խոսքի առարկան, այլ կերպ ասած՝ խոսողի և խոսակցի հարաբերությունը նշանային ուղղության, խոսողի և խոսքի առարկայի հարաբերությունը՝ նշանային կախման կարգերի հիմնական (→) և հակադիր (←) եզրերի դրսևորումներ են: Դիմային իմաստների կրողները փաստորեն վերջավորությունների կոմպլեքսների վերջին տարրերն են, և ստորև կբերվեն հենց դրանք.

ինու→ (իրադրա-նշանային ուղղորդ՝ ումից է սկիզբ առնում խոսքը) և ինկ→ (իրադրա-նշանային կախորդ՝ ումից է կախված խոսքը)՝ -մ, -ա/-ի.

ինու← (իրադրա-նշանային ուղղյալ՝ ում է ուղղված խոսքը)՝ -ս, -(ք)ր, —, -ֆ.

ինկ← (իրադրա-նշանային կախյալ՝ ինչ խոսքային կախման մեջ է խոսողից)՝ -լր, -ն:

Մենք ինու→-ի տակ չբերեցինք հոգնակի -նք տարրը, որ երկարժեք է. այն կարող է նշանակել խոսողներին կամ առանց խոսակիցների («բացառյալ՝ էքսկլուզիվ մեմֆ»), և այդ դեպքում դիմային առումով ունի ինու→ և ինկ→ եզրերի արժեք, կամ խոսակիցների հետ միասին (սենթառական՝ ինկլուզիվ մեմֆ), և այդ դեպքում ունի նաև ինու← լրացուցիչ արժեքը:

2) Թվային իմաստները ցույց են տալիս խոսքի հետ կապված առարկաների թիվը՝ մեկ (եզակի) և ոչ մեկ (հոգնակի) արտահայտությամբ:

Այս առումով թվային իմաստները սերտորեն կապվում են դիմային իմաստների հետ և նույնպես հանդես գալիս Ե, Ե₁ բաղադրիչների իրացումների վերջին տարրերով. նրանց իրադրականությունը դրսևորվում է հենց դեմքի հետ ունեցած կապի միջոցով, որ տվյալ դեպքում մենք չենք նշանակի: Եզակին թվի շեղոք (.) եզրի դրական, իսկ հոգնակին՝ ժխտական դրսևորումն է.

թ.՝ -մ, -ա/-ի, -ս, —, -ր.

թ—՝ -նք, -ֆ, -ն:

3) Ժամանակային իմաստների տարբերակումն ըստ համադրական և վերլուծական ձևերի տարբեր է. վերլուծական ձևերի դեպքում առկա է երկու եզր, որոնցից մեկն արտահայտում է հաղորդվող բայաժամանակի համընկումը խոսելու ժամանակի հետ (ներկա), մյուսը՝ խոսելուց առաջ առնված մի այլ ժամանակակետի հետ (անցյալ): Եթե խոսելու ժամանակը որպես իրադրական նշանակենք իժ և հաղորդվող ժամանակը՝ ժ տառերով, ապա կունենանք հետևյալ բանաձևերը՝ համապատասխան իրացումներով.

իժ→ժ→՝ եմ, ես, է, եմֆ, եֆ, են.

իժ→ժ→՝ էի, էիր, էր, էիմֆ, էիֆ, էին:

Փոքր ինչ տարբեր է վիճակը համադրական ձևերի դեպքում: Այստեղ վերջավորությունների երկրորդ շարքի արտահայտած իմաստները կհամընկնեն վերլուծական անցյալի արտահայտած իմաստների հետ՝ ա/-ի, -ալ/-ի, -ալ/—, -անք/-ինք, -ալ/-իֆ, -ալ/-ինք վերջավորությունների դեպքում լիովին, իսկ -այի/-եի, -այիր/-եիր, -ար/-իր, -այինք/-եինք, -այիֆ/-եիֆ, -այինք/-եինք ձևերի դեպքում՝ գործողության հակիմաստության երանգով, այսինքն՝ հաստատականի դեպքում չիրականացման և ժխտականի դեպքում՝ իրականացման նշանակումով. հմտ. «երանի գնայի», «իմա՝ աչեմ գնացել» և «երանի չգնայի», «իմա՝ աչեմ գնացել եմ»): Վերջավորությունների մյուս շարքի (—ալ/—եմ, —ալ/—ես, —ա/-ի, —անք/—ենք, ալ/—եֆ, —անք/—են, —/—իր, —եֆ) իմաստները ինքնին առնված որոշակի չեն և ցույց են տալիս հիմնականում ապառնիի (խոսելու պահին հաջորդելու), հազվադեպ նաև ներկայի (խոսելու պահի հետ համընկ-

ներու) իմաստ, ընդ որում ձևականորեն այդ արտահայտվում է կ- և պիտի մասնիկների հետ զուգորդվելով կամ չզուգորդվելով. այսպես, եմ, կամ, ունեմ, գիտեմ, արժեմ ձևերը չեն կարող զուգորդվել կ-, պիտի, մի՛ մասնիկների հետ և արտահայտում են ներկայի իմաստ իժ→→→ժ→→՝ ի տարբերություն լինեմ, էլեմ, ունեմ, գիտեմ, արժեմ ձևերի, որոնք ունեն ապառնիի (հս-ջորդման)՝ իժ←ժ→իմաստ:

Հայ (և ոչ միայն հայ) քերականության մեջ ոչ սահմանական (ըզծական, ենթադրական, հարկադրական, հրամայական) եղանակների այս ձևերի գնահատման հարցում միասնություն չկա. սովորաբար գործածվում են ըզծական ապառնի, ենթադրական ապառնի, հարկադրական ապառնի, հրամայական ապառնի տերմինները, բայց հանդիպում են նաև ըզծական եերկա, ենթադրական եերկա, հարկադրական եերկա, հրամայական եերկա անվանումները: Իրականում այստեղ մենք գործ ունենք ապառնիի հետ, եթե նկատի ունենանք հաղորդվող գործողության ժամանակը. բուն իղձը (ցանկությունը), ենթադրությունը, հարկադրանքը և հրամանը տեղի են ունենում ներկայում՝ խոսքի իրականացման պահին՝ զնաւ=ես ցանկանում եմ, որ դու զնաւ և այլն: Հաճախ, ինչպես, օրինակ, հրամայականի դեպքում, առկա է անմիջական հաջորդում, այսինքն՝ զրո տևողություն՝ ժ←տե. արտահայտությամբ:

Ե և ԵԼ բաղադրիչների արտահայտած ժամանակային իմաստները գնահատելիս հարկավոր է նկատի ունենալ, որ դրանք փաստորեն ճշգրտվում են ինչպես ա, այնպես էլ Ե բաղադրիչների իրացումներով, ընդ որում Ե-ի իրացումները հաճախ կապված են բայարմատների հատուկ կերպային իմաստների հետ: Այսպիսով, ժամանակային իմաստները տարբեր դեպքերում տարբեր դրսեվորումներ են ունենում:

Այժմ անցնենք ոչ եզրային բաղադրիչների իմաստային քննությանը՝ ըստ իրացումների ցանկում դրանց գրաված տեղերի հաջորդականության:

Համադրական հիմքերի կազմիչները հիմնականում կերպային իմաստ են արտահայտում՝ -ան, -են, -ե, -չ մասնիկները համապատասխան զրո մասնիկի հետ միասին՝ անկատարության (անավարտվածության) և -աց/-եց-, -ծ/-(-ն-), -ը/-(-ն-) տարբերը համապատասխան զրո տարբերի հետ միասին՝ կատարյալության (ավարտվածության) իմաստ: Այս հիմնական կարգային իմաստների հետ միասին հանդես են գալիս լրացուցիչ իմաստներ. -ան- մասնիկը ածականական արմատի դեպքում կարող է արտահայտել ընթացակազմի հիմնական եզրին հատուկ ընթացափոխության իմաստ (հատկանիշի աստիճանական հավելում՝ →. հմտ. մեծ-ան-ում եմ՝ ի հակադրություն մեծ եմ ձևի). -են-ը ներկայի համադրական ձևեր ունեցող բայերի դեպքում արտահայտում է բազմակատարության իմաստ (հմտ. ունե-են-ում եմ՝ ի հակադրություն ունե-եմ ձևի): Համադրական ձևերի, այսպես կոչված, հիմքակազմիչ մասնիկները, արտահայտում են հետևյալ իմաստները (կ՝ կերպ, կզ՝ կազմ, ըկզ՝ ընթացակազմ, հճ՝ հաճախականություն).

կ← (գործողության վերջ՝ ավարտ)՝ -աց/-եց-, -ծ/-(-ն-), -ը/-(-ն-), —.

կ←/-(գործողության անավարտություն)՝ -ան- (ոչ ածականական արմատների դեպքում), -են- (ոչ համագրական ներկայի դեպքում), -ն-, -չ-, —.

կ←/ըկզ→ (անավարտ գործողություն՝ հատկանիշի հավելմամբ)՝ -ան- (ածականական արմատների դեպքում).

կ←/հճ/ (անավարտ գործողություն՝ մեկից ավելի անգամ կրկնությամբ)՝ -են-:

Վերլուծական հիմքերի կազմիչները (այսպես կոչված, դերբայական մասնիկները) արտահայտում են հիմնականում ժամանակային իմաստներ, որոնց կարող են միանալ լրացուցիչ այլ իմաստներ. -ում-ով ձևերին զուգահեռ -ամ-ով ձևերը արտահայտում են ընթացակազմի կարգի միջին եզրին հատուկ վիճակ, -ում-ով ձևերը՝ վիճակափոխություն (հմտ. կանգնած եմ՝ ի հակադ-

րության կազմում եմ ձևի)։ -ա/-ի մասնիկը փոխարինում է կ- մասնիկին ժխտական ձևերի դեպքում, որովհետև շ-ն և կ-ն իրար հետ զուգորդվել չեն կարող (կ-գր-եմ և շ-եմ գր-ի = չ-կ-գր-եմ)։ Եթե մի կողմ թողնենք -ա/-ի մասնիկը, որի իմաստը նշվել է, ապա մյուս դեպքերում մենք կունենանք իմաստային հետևյալ բանաձևերը.

ժ→ (ժամանակային նախորդում)՝ -ել.

ժ← (ժամանակային հաջորդում)՝ -ելու.

ժ→ — (միաժամանակություն)՝ -ում, -ալիս/ելիս.

ժ→-ըկզ→ (միաժամանակություն՝ վիճակափոխությամբ հանդերձ)՝ -ում/(-ած).

ժ→-ըկզ→ (միաժամանակություն առանց վիճակափոխության)՝ -ած/(-ում)։

Կառուցվածքային d բաղադրիչի իրացումները իրենց առկայությամբ և բացակայությամբ արտահայտում են պատճառականության կարգի տարբեր եզրերը, ընդ որում՝ ըստ բայարմատի բնույթի երկու իրացումներից յուրաքանչյուրը կարող է մեկից ավելի իմաստ արտահայտել։ -վ-ն հիմնականում արտահայտում է կրավորականություն (հմմտ. սպան-վ-ել է), բայց կարող է ըստ բայարմատի (բայահիմքի) բնույթի և կապակցելիության (դիրքային տարբերակների ձևով) արտահայտել նաև անդրադարձելիություն (հմմտ. հագն-վ-ում եմ) և փոխադարձելիություն (համ-բուր-վ-ում եմ)։ -վ- ստացող բայերը ներգործական բնույթի են, և, հետևաբար, -վ-ն արտահայտում է ներգործականություն։ -(ա, Ե)ց(ն/ր)- մասնիկը -վ-ով բնութագրվող (ներգործական) բայերի դեպքում արտահայտում է կրկնակի ներգործություն կամ, ինչպես ասում են, պատճառականություն, ընդ որում սա հնարավոր է ոչ բոլոր բայերում տանների դեպքում (հմմտ. հագ-ցն-ում է, բայց չկա սպան-եցն-ում է)։ այս բայերի դեպքում սպասարկու գործառնությամբ հանդես է գալիս Վամ բայը (հմմտ. սպանել է Վալիս)։ -(ա, Ե)ց(ն/ր)- մասնիկը կարող է համապատասխանաբար ոչ ներգործական բայերից կերտել ներգործականներ (հմմտ. նստ-եմ և նստ-եցն-եմ)։ Վերջապես, կա բայերի մի մեծ խումբ, որ կարող է -(ա, Ե)ց(ն/ր)- մասնիկն ստանալ, բայց -վ- սովորաբար չի ստանում, բացի ժողովրդախոսակցական լեզվի համար բնորոշ կրավորակերպ բայերի դարձվածային գործածությունից՝ չի Բն-վ-ում (=չեմ կառնդանում Բնել)։

Այսպիսով, ժամանակակից հայերենում պատճառականության կարգի եզրերը ներկայացված են հետևյալ կերպ.

պ→ (ներգործականություն)՝ -վ-, -(ա, Ե)ց(ն/ր)- (չեզոք բայահիմքերին հարելու դեպքում).

պ← (կրավորականություն)՝ -վ-.

պ→ (բուն պատճառականություն կամ կրկնակի անցողականություն)՝ -(ա, Ե)ց(ն/ր)- (անցողական բայահիմքերի դեպքում).

պ←→ (փոխադարձություն)՝ -վ- (որոշ բայահիմքերի դեպքում).

պ↔ (անդրադարձություն)՝ -վ- (որոշ բայահիմքերի դեպքում).

պ. (չեզոքություն)՝ -(ա, Ե)ց(ն/ր)- (-վ- չստանալու պայմանով)։

Կառուցվածքային e բաղադրիչի լին-/եղ- իրացումը, որպես կրկնավերլուծական (երկրորդական բաղադրյալ) ձևերի կազմիչ ցույց է տալիս գործողության՝ մեկից ավելի անգամ տեղի ունենալը (հմմտ. գրելիս եմ լին-ում) ինչպես համադրական ներկա ունեցող բայերի -են-ով ներկայի դեպքում (ունեն-ի-ում եմ՝ ի հակադրություն ունե-եմ-ի)՝ հճ→։

Ավանդաբար որպես բառակազմական արժեք ունեցող մասնիկներ բնութագրվող Ի, ց, Ի բաղադրիչների իրացումները տարարժեք են։ Եթե Ի-ի և Ի-ի իրացումները համեմատաբար միասնական իմաստներ են արտահայտում, ապա նույնը չի կարելի ասել ց բաղադրիչի իրացումների մասին։

Կառուցվածքային Ի բաղադրիչի իրացումները արտահայտում են հիմնականում կերպաժամանակային իմաստներ.

ժ→ (ժամանակով առաջ)՝ նախա- (նախա-գուշակել, նախա-գգալ, նախա-գգուշանալ և այլն), կանխա- (կանխա-գուշակել, կանխա-գգալ և այլն). նա-

խա-ն կարող է արտահայտել նաև դասային իմաստ՝ (դ→)՝ նախա-զանել, նախա-դասել. այս իմաստը հատուկ է մասնավորապես ոչ բայական հիմքերին (հմմտ. նախա-դան, նախա-դաս).

կ→ (ոչ առաջին անգամ կամ կ₂՝ երկրորդ անգամ)՝ վեր(ա)- (վեր-արտադրել, վերա-բաժանել, վերա-բաղադրել, վերա-դժել և այլն):

Հաղվադեպ ժամանակային իմաստ կարող են արտահայտել (ժ←) նաև ուղղության իմաստ արտահայտող հեա(ա)- (հետաձգել), աար(ա)- (տարա-ժամել) նախամասնիկները:

Կառուցվածքային ի բաղադրիչի իրացումներն արտահայտում են գերազանցապես գործողության բաղմակատարություն, ինչպես արդեն հիշված լին- / նդ- և -են- (ուն-են-ում եմ) բաղադրիչները, բայց կարող են արտահայտել նաև կատարողների հոգնակիություն.

հճ/ (մեկից ավելի անգամ կատարում)՝ -ատ- (կար-ատել), -ոտ- (թփ-ոտել), -կոտ- (թռչ-կոտել), -ոտ- (ցատկ-ոտել), -շոտ- (խառն-շոտել). . . այս իմաստը, կարող է արտահայտվել նաև արմատի սոսկական կրկնությամբ կամ կրկնության հետ միասին -ոռ- մասնիկի հավելմամբ՝ պաշ-պշել, պաշ-պշ-ոռել:

Կառուցվածքային ց տարրի իրացումների մեջ մեծ թիվ են կազմում ոչ գործուն տիպերը, որոնցով կազմված ձևերը ժառանգվել են պատրաստի վիճակում և որպես բաղադրյալ գիտակցվում են ածանցյալ հիմքերի անկախ գործածության տարրերի պայմաններում: Բաղադրիչի իրացումներն արտահայտում են կազմի, ուղղության, չափի և տեղի կարգերին հատուկ իմաստներ և ըստ այդ կարգերի կբաշխվեն հետևյալ կերպ.

կզ→ (հետ միասին)՝ զուգ(ա)-, համ(ա)-, այլև բւղ(ա)-, հար(ա)-

կզ→՝ փոխ(ա)-

ուղ←՝ սւար(ա)-, բաց(ա)-

ուղ←→՝ դիմ(ա)-

ուղ↷՝ հատ(ա)-

հմ. չ→՝ դեր(ա)-

հմ. չ←՝ թեր(ա)-

չ . ՝ սու(ա)- «կից»

տ→՝ առաջ(ա)-

տ←՝ ետ(ա)-

տ↑՝ վեր(ա) «վրա», մակ(ա)-

տ↓՝ ենթ(ա)-, ընդ-(ընդգծել), ստոր(ա)-

տ↷՝ շրջ(ա), հեղ-(ա)-

տ→↷՝ ներ-

տ→↷՝ արտ(ա)-

ուղ←→տ→↷՝ թափ(ա), միջ(ա)-, տրամ(ա)ր-

իրուղ→՝ անդր(ա)- «այն կողմը»

ուղղ→տ*՝ ընդ- «չորս կողմ»

Բայական այս նախամասնիկներին կարող են փոխարինել մակբայական հարադիրները (երբեմն իմաստային տարբերությամբ), որոնք հատուկ են մասնավորապես ժողովրդախոսակցական լեզվին և կազմում են յուրատեսակ վերլուծական բարդություններ. հմմտ. ներս քաշել և ներքաշել, դուրս բխել և արտաբխել, մեջ մտնել և միջամտել, (հ)ետ դարձնել և (հ)ետադարձել, առաջ դիմել և առաջադիմել և այլն: Բայական այս հարադիրները հաճախ ավելի գործուն են, և նրանցով կազմված ձևերը նախամասնիկների մեջ չունեն համապատասխան զուգահեռներ: Նրանք գերազանցապես տեղային իմաստներ են արտահայտում:

Բայի կառուցվածքային բաղադրիչների իմաստային վերլուծությունը մեզ բերում է հետևյալ եզրակացություններին.

1. Անցկացված վերլուծության հիման վրա ճշտելով հոգվածի սկզբում տրված դրույթը բայի բաղադրիչների իմաստային բազմազանության վերաբերյալ՝ կարելի է ասել, որ բայը, լինելով առարկայական հարաբերությունների արտահայտիչ, իր կառուցվածքային տարրեր բաղադրիչներով դրսևորում է ոչ միայն իր համար բնորոշ ընթացային (ընթացակազմի, պատճառականության, հաճախականության, կերպի, տևողության, ժամանակի), այլև ոչ ընթացային իմաստներ (կազմի, թվի, ուղղության, չափի, տեղի): Միաժամանակ լինելով նախադասության ստորոգման հիմնական արտահայտիչ՝ բայը հանդես է բերում նաև ստորոգման հետ կապված նշանա-իրադրական իմաստներ՝ ժխտականության (հակասության ժխտական եզրի), պատճառականության (եղանակի) և ժամանակի (իրադրաժամանակի), կախման և ուղղության (դեմքի), թվի, ընդ որում վերջիններս որոշվում են նախադասության ենթակայի արտահայտած առարկայական կարգերով՝ նրա հետ բայի դեմքի և թվի համաձայնեցմամբ:

2. Հայերենի առանձնահատկություններին համապատասխան՝ բայի կառուցվածքային բաղադրիչների արտահայտած իմաստների բաշխումն ըստ կադապարային հաջորդականության հետևողական չէ. կարելի է ասել միայն, որ նշանա-իրադրական իմաստներն արտահայտվում են հիմնականում եզրային ա, ս, ց, առարկայական իմաստները՝ հիմնականում բառակազմական համարվող ց և մասամբ ի տարրերի միջոցով, ընդ որում միևնույն կարգին պատկանող իմաստները երբեմն կարող են արտահայտվել տարրեր բաղադրիչների իրացումներով:

3. Կարգային իմաստների բաշխման առանձնահատկությունները հաճախ կախված են բայահիմքային (բայարմատային՝ А-ի) ընդհանուր իմաստներից և հանդես են գալիս դրանց յուրատեսակ լրացումների դերում. համտ., օրինակ, հիմքակազմ Ե բաղադրիչի իրացումների բաշխումն ըստ տարրեր հիմքերի՝ նրանց առկայությունը կամ բացակայությունը ըստ համապատասխան հիմքերի:

СЕМАНТИЧЕСКИЙ АНАЛИЗ СТРУКТУРНЫХ КОМПОНЕНТОВ ГЛАГОЛОВ

ГЕВОРК ДЖАУКЯН
Академик АН Арм. ССР

Р е з ю м е

Для армянского глагола на основе универсальной лингвистической модели (УЛМ) устанавливается 10 структурных моделей (4—для синтетических и 6—для аналитических форм) и 8 групп аффиксов (последние—по позициям, занимаемым ими в моделях). В каждой группе определяются и формально описываются все значения: категории и термы (кратчайшие единицы) плана содержания. В армянских глагольных аффиксах находят выражение как основные—непроцессуальные (состав, число, направление, мера и место) и процессуальные (изменение, причинность, кратность, вид, протекание и время), так и знаково-ситуативные категории УЛМ (отрицание, ситуативная причинность, т. е. наклонение, ситуативное время, ситуативная зависимость и ситуативное направление, т. е. лицо, ситуативное число). Распределение термов категорий УЛМ по группам аффиксов неравномерно: оно зависит как от структурных особенностей армянского языка, так и от значения глагольных корней, выступающих в роли ядерных членов.